Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-814-03.04.2024-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.1-ին կետով.

«16.1) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման գործակիցները և նորմատիվները, ֆինանսավորման կարգերը.»:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների

Երկրորդ ընթերցում

(Կ-814-03.04.2024-ԳԿ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի ~~23~~10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.1-~~րդ~~ին կետով.

«16.1) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման գործակիցները և նորմատիվները, ֆինանսավորման կարգերը.»:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-814-03.04.2024-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Շտկվել է «Հանրակրթության մասին» օրենքի ընդունման ամսաթվում առկա վրիպակը՝ «23» թիվը փոխարինվել է «10» թվով և «16.1-րդ» գրելաձևը փոխարինվել է «16.1-ին» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածի վերնագիրը հանվել է՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

			«Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:		
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «այլ իրավական ակտերն ընդունվում են» ձեւակերպումը փոխարինվել է «այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են» ձեւակերպմամբ՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, որը սահմանում է. « օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է